

ԹԹաստանները ու կը սիրէինք կեանքը առ-նուազն մեզմէ դուրս շռայլութեան: Ինչպէ՞ս: Այսպէ՞ս: Բան մը կար, որ ստիպուած էր սորվիլ, բաւական տա-ռապանքով, գիւղապետը -ստիկա մոռնալու էր իր պա-տանութիւնը, այսինքն՝ մինչեւ հող հասնող ազատու-թիւնը իր պապերուն բերքէ, վարկէ, որսէ, գէնքէ, աւա-զակներու հետ յաղթական բախումներէ- բոլորն ալ բռնապետութեան արքաններովը մէկիկ-մէկիկ նեղցը-լած: Հայկական աղէտը, այսինքն՝ 1895ի ջարդերը, վեր-ջաբան մը կը կազմէր ապրելու կերպի մը: Քիչ մը ամէն տեղ, մէկ ամսուան մէջ, մեր ժողովուրդը, ամենազօր կարգախօսով մը դարձուեցաւ դար մը առաջուան իր գե-րութեան: Չեմ բանար պատկերաշարքը յղացքին: Ու կը բացուէր նոր շրջանը: Պարտաւոր էինք ապրիլ, թուրքին հարկը վճարելու, մեր գերութիւնը մեզի հաշտ ընելու՝ մեր միտքին ալ գերութեամբը, փրցնել նետելով մեր միտքէն բաներ, որոնք բաց վէրքի մը պէս կը թունաւորէին մեր հոգին: Չեղանք ցեղովին սողոսկուն, կեղծա-ւոր... լուացող- թուրքերուն հետ հարիւրին կէսը հասնող քաղցը մեր տարիները մեզ կ'արգիւլէին ատկէ: Միւս կող-մէ փոխուած էր մանաւանդ թուրքը, որ ո՛չ միայն մեզ կ'ատէր, այլեւ մեր ամէն մէկ օրը իրեն սպառնալիք, իրմէ կորզուած, գողցուած բարիք մը կ'արժեւորէր: Ու այս մտայնութիւնն էր, որ պիտի հանդերձէր 1915ի աղէտը: Առայժմ, մենք բոլորս, ու ամէնէն առաջ սա թշուա-ռական գիւղը պարտաւոր էր վարուիլ գիտնալ, գայմա-գամին խոհարարէն մինչեւ դրացի առանձին կոյր մու-րացիկը, որ իր երգը բռնի կը ծախէր կեավուրներուն ու բերանը կը բանար ո՛չ միայն երգի, այլեւ՝ ցեղին վայել հայհոյութեանց հեղեղին, քրիստոնեայէն կերուած ամէն մէկ պատառին մէջ բաժինը ճշգրիտով արդար հաւատաց-եալին: Մեր լեզուով վարուիլ գիտնալը կը նշանակէր, այդ օրերուն, վաստակին 4/5ը բաշխել այդ ջոյլերին: Ու թե-րեւս խորունկ բան մը ըսած չեմ ըլլար, երբ այս գե-